

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի կառավարման 2024-2026 թվականների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվում է ծրագրի գործողության ժամանակահատվածում պետական գույքի առանձին տեսակների համար իրականացվելիք միջոցառումների և գործարքների, զարգացման առաջնահերթությունների ու սահմանափակումների նկարագրությունը սահմանելու նպատակով՝ ապահովելով այս ոլորտում քաղաքականության միասնականությունը, շարունակականությունը և բարեփոխումների հետևողական իրականացումը:

2. Ծրագիրը գործում է 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Յուրաքանչյուր տարի, մինչև տվյալ տարվա մարտի 15-ը, ծրագրում անհրաժեշտության դեպքում համապատասխան վերադաս պետական մարմինների հիմնավորված առաջարկությունների դեպքում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ընթացիկ և հաջորդ տարվա համար նախատեսված միջոցառումների և գործարքների նոր նկարագրությունը սահմանելու և փոփոխելու համար:

3. Ծրագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն կառավարության, պետական մարմինների ղեկավարների, մարզպետների աշխատակազմերի կողմից պետական գույքի և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կտրվածքով սահմանված միջոցառումներում քանակական ցուցանիշների էական փոփոխություն կատարելու և ծրագրում նոր միջոցառումների ընդգրկման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու դեպքում:

II. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

1) Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող անշարժ և շարժական գույքի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող շենքերի և շինությունների ու դրանց սպասարկման և օգտագործման համար հատկացված պետական սեփականություն հանդիսացող կառուցապատված հողամասերի, կառուցապատված հողամասերի օպտիմալացման արդյունքով առանձնացված՝ չկառուցապատված հողամասերի, ինչպես նաև պետական կամ ենթակա պետական մարմիններին հանձնված (ամրացված) և օտարման առաջարկվող պետական հողամասերի.

2) կառուցապատված հողամասերի օպտիմալացման արդյունքում առանձնացված չկառուցապատված հողամասերի, պետական կամ ենթակա պետական մարմիններին ամրացված և օտարման առաջարկվող պետական սեփականություն համարվող հողամասերի.

3) առևտրային կազմակերպություններում պետությանը պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի).

4) սեփականության իրավունքով պետությանը պատկանող մտավոր սեփականության օբյեկտների և դրանց նկատմամբ պետությանը պատկանող գույքային իրավունքների.

5) նվիրաբերության և նվիրատվության միջոցով Հայաստանի Հանրապետությանը փոխանցված անշարժ գույքի.

6) պետությանը պատկանող գույքային այլ իրավունքների վրա:

5. Սույն ծրագրի գործողությունը չի տարածվում՝

1) պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերի, ընդերքի, բնության հատուկ պահպանվող տարածքների, մեկուսի ջրային օբյեկտների և պետությանը պատկանող այլ բնական պաշարների, պատմության և մշակույթի՝ օտարման ոչ ենթակա անշարժ հուշարձանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնադրած կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնակցությամբ կազմակերպությունների գույքի վրա.

2) պաշտպանական, սահմանային, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազորված մարմնի տիրապետմանը և օգտագործմանը հանձնված պետական գույքի վրա, որն իր նշանակությամբ նախատեսված է գաղտնի աշխատանքների կատարման համար:

6. Ծրագրի նպատակներն են՝

1) պետական գույքի միասնական կառավարման արդյունավետ գործող համակարգի ստեղծում և դրա շնորհիվ պետական գույքի օգտագործման արդյունավետության շարունակական բարձրացում.

2) պետական գույքի արդյունավետ կառավարման շնորհիվ Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում.

3) պետության կարիքների առաջնահերթ բավարարման համար անհրաժեշտ պետական գույքի կազմի սահմանում և պետական մարմինների բնականոն գործունեության իրականացման և պետության սոցիալ-մշակութային պարտավորությունների կատարման համար բավարար գույքային նախադրյալների ստեղծում.

4) պետական գույքի պարբերաբար գույքագրման, հաշվառման և օգտագործման վիճակի մշտադիտարկման ու օգտագործման արդյունավետության գնահատման միջոցով՝ տնօրինման և օգտագործման առավել արդյունավետ ուղիների բացահայտում, պետական գույքի օպտիմալ ծավալի և կազմի սահմանում, ինչպես նաև օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունավետ համակարգի մշակում և ներդրում.

5) վաճառքի ենթակա բարձրարժեք և իրացվելի պետական գույքի ներգրավման շնորհիվ տնտեսության նախընտրելի ոլորտներում խոշոր ներդրումային ծրագրի իրականացման ապահովում և ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծում.

6) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետ կառավարման համակարգի ներդրման շնորհիվ կազմակերպությունների շահույթի ծավալի շարունակական ավելացում և շահութաբերության մակարդակի բարձրացում:

7. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

1) պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրական դաշտի պարզեցում և վարչարարության կրճատում, գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում.

2) օտարման ենթակա պետական գույքի վաճառքի գրավչության բարձրացում, վաճառքի իրականացման ու օգտագործման տրամադրման համար առավել արդյունավետ գործիքակազմի ներդրում, պետական գույքի վաճառքի օտարման տրամադրման բնագավառում ներդրումների ներգրավման խթանում.

3) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքի բացահայտում և տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացում.

4) պետության կարիքների բավարարման համար անհրաժեշտ պետական գույքի կազմի և նախընտրելի կառուցվածքի սահմանում.

5) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության գնահատման գործուն համակարգի ներդրման հիման վրա աշխատանքի խրախուսում և պատասխանատվության նոր գործիքակազմի կիրառում:

### III. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Մույն ծրագրի իրականացման հիմքում դրված են պետական գույքի կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) որոշակիության սկզբունք, որը նախատեսում է կառավարման յուրաքանչյուր միավորի (միավորների) նկատմամբ կառավարման նպատակի սահմանում, այդ

նպատակին հասնելու քայլերի ծրագրավորում, կառավարման որոշումների ընդունման հիմնավորվածության ապահովում, պարտավորությունների սահմանում, ինչպես նաև հաշվետվողականության և հսկողության համակարգի ներդրում.

2) թափանցիկության և անընդհատության սկզբունք, որը նախատեսում է պետական գույքային շրջանառության վերաբերյալ թափանցիկության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվության հրապարակայնության ապահովում.

3) շահերի հավասարակշռության ապահովման սկզբունք, որը նախատեսում է մի կողմից գույքի օտարման կամ օգտագործման դեպքում պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացման և գույքի հետագա օգտագործման արդյունավետության բարձրացում, մյուս կողմից՝ սոցիալական խնդիրների լուծման և ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից հիմնավորված որոշումների ընդունում, ինչպես նաև կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների սահմանում.

4) ծրագրային մոտեցման սկզբունք, որը նախատեսում է կառավարման նպատակներին հասնելու և խնդիրների լուծման համար պետական գույքի երկարաժամկետ՝ հնգամյա ծրագրի կազմում և այդ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմի, անհրաժեշտ ռեսուրսների և վերջնական արդյունքների սահմանում:

9. Պետական գույքի կառավարման գերակայություններն են՝ կախված գույքի նշանակությունից.

1) պետական գույքային հարաբերությունների կարգավորման բարեփոխման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանումը.

2) պետական գույքային հարաբերությունների կարգավորման բնագավառի հիմնախնդիրների լուծումը, պետական գույքային հարաբերությունների կարգավորման բարեփոխման ծրագրերի իրականացումը.

3) պետական գույքային հարաբերությունները կարգավորող մեկ միասնական օրենքի և դրանից բխող իրավական ակտերի ընդունումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը.

4) պետական գույքի հաշվառման բնագավառում միասնական սկզբունքների սահմանումը և պետական գույքի հաշվառման գրանցամատյանում ամբողջ պետական գույքի ընդգրկումը, ինչպես նաև այդ բնագավառում արդիական տեխնոլոգիաների կիրառումը և հաշվառման տվյալների ճշգրտության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ընտրանքային ուսումնասիրությունների իրականացումը.

5) պետական անշարժ գույքի, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մշտադիտարկման իրականացումը, սահմանված կարգերին համապատասխան պետության գույքի արդյունավետ օգտագործման և պահպանման ապահովումը.

6) պետական գույքի, այդ թվում նաև պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի) իրական արժեքը որոշելու նպատակով պարբերաբար շուկայական գնահատման իրականացումը.

7) պետության գույքային շրջանառության բարեփոխման բնագավառում քաղաքականության մշակումը և իրականացումը.

8) պետական գույքի նկատմամբ սեփականության և օգտագործման իրավունքի փոխանցման հետ կապված գործարքների նախապատրաստումը և իրականացումը.

9) պետական մարմիններին պետական գույքի ամրացման և հետ վերցնելու, այդ թվում նաև մինչև հինգ մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի ամրացման գործընթացների կազմակերպումը և իրականացումը.

10) պետության գույքային շրջանառության ընթացքում ծագած պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացումը.

11) առևտրային կազմակերպություններում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասերի (բաժնետոմսերի) կառավարման բնագավառում բարեփոխումների մշակումը և իրականացումը.

12) պետական գույքի կառավարման լիազոր մարմնի և պետական գույքային հարաբերությունների կարգավորման բնագավառում լիազորություններ ունեցող պետական կառավարման համակարգի այլ մարմինների գործունեության համակարգումը:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

10. Պետական գույքի կառավարման ուղղություններն են՝

- 1) պետական գույքի մասնավորեցումը.
- 2) պետական գույքի օտարումը.
- 3) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարումը.
- 4) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների լուծարումը.
- 5) պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրումը.
- 6) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքի բացահայտումը.
- 7) 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումները և վերլուծությունը.
- 8) Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայումը և սպասարկումը.
- 9) պետական գույքի նվիրաբերությունը.
- 10) պետական գույքի նվիրատվությունը,
- 11) պետական գույքի գնորդների, նվիրատուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում պայմանագրերով ստանձնած պարտավորությունների նկատմամբ հսկողություն իրականացնելը գնորդների, նվիրատուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով ստանձնած պարտավորությունների նկատմամբ:

11. Պետական գույքի առանձին օբյեկտների օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է՝ հստակեցնել պետական գույքի կազմն ու կառուցվածքը և միաժամանակ, օպտիմալացնել այդ քանակը՝ հիմք ընդունելով

պետության կողմից հստակ սահմանված գործառույթների իրականացման անհրաժեշտությունը, ինչի հետ կապված իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) լուծարել.

ա. մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունները՝ համաձայն N 1 ցանկի,

բ. ներկայացնել լուծարման այն առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում անընդհատ աշխատել են աճող վնասով, թույլ են տվել կուտակված վնասի ծավալի ավելացում և չունեն զարգացման հեռանկար.

2) ծրագրով 100 տոկոս պետական սեփականության բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման միջոցառում նախատեսված չէ.

3) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տնօրինությանը հանձնել չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական անշարժ գույքը՝ համաձայն N 2 ցանկի.

ա. պետական մարմինների և մարզպետների աշխատակազմերի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը (որոնք ունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում) կոմիտեի տնօրինությանը հանձնել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման N 1 հավելվածի,

բ. պետական մարմինների և մարզպետների աշխատակազմերի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը (որոնք չունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում)



կոմիտեի տնօրինությանը հանձնել գրանցման աշխատանքները կատարելուց հետո, իսկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման աշխատանքներն իրականացնել և ավարտին հասցնել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման N 2 հավելվածի.

4) մասնավորեցնել.

ա. մասնավորեցման ծրագրում ընդգրկված և մինչև սույն ծրագիրն ուժի մեջ մտնելը չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունները և այլ օբյեկտները մասնավորեցնել կամ լուծարել՝ համաձայն N 3 ցանկի,

բ. բարձր արժեք ունեցող ու իրացվելի գույքի ներդրմամբ ստեղծված բաժնետիրական ընկերություններն ընդգրկել մասնավորեցման ծրագրում,

գ. պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում անընդհատ աշխատել են վնասով և թույլ են տվել կուտակված վնասի ծավալի ավելացում և ունեն ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում զարգացման հեռանկար.

5) ներդրումային միջավայրի բարելավման նպատակով հավատարմագրային կառավարման հանձնել 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերով հավաստված իրավունքները.

6) սահմանել կազմակերպությունների գործունեությունը գնահատող (հաշվի առնելով գործունեության առանձնահատկությունները) արժեքային և ոչ արժեքային ցուցանիշներն ու այդ ցուցանիշների համաձայն կազմել կազմակերպությունների հեռանկարային զարգացման ծրագրերը: Ընդ որում, ծրագրերը պետք է հաստատվեն վերադաս կառավարման մարմնի կողմից՝ համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ.

ա. յուրաքանչյուր պետական կառավարման համակարգի մարմնի կողմից սահմանել հսկողություն իր համակարգում գործող կազմակերպությունների գործարար ծրագրերի կատարման ընթացքի նկատմամբ, իսկ լիազոր մարմինը՝ մոնիթորինգի արդյունքների հիման վրա պետք է ներկայացնի առաջարկություններ Հայաստանի

Հանրապետության կառավարություն և վերադաս մարմին կազմակերպությունների կառավարումը բարելավելու ուղղությամբ,

բ. իրականացնել կազմակերպությունների կողմից հիմնական միջոցների օգտագործման վիճակի պարբերական ուսումնասիրություններ, առանձնացնել չօգտագործվող միջոցները և հանձնել լիազոր մարմնի տնօրինությանը,

գ. մշակել և իրականացնել կուտակված վնասի շարունակաբար նվազեցում ապահովող և ցածր շահութաբերությամբ աշխատող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական առողջացման և շահութաբերության մակարդակի պարբերական բարձրացումն ապահովող զարգացման ծրագրեր, այդ թվում՝ վնասով աշխատող կազմակերպությունների համար հաստատել ֆինանսական ուղղության կոնկրետ միջոցառումների երկամյա ժամանակացույց.

7) վերադաս կառավարման մարմինների նախաձեռնությամբ իրենց ենթակայության առևտրային կազմակերպություններում ներդրումային ծրագրի մշակման և ներդրման համար համապատասխան աշխատանքների իրականացում՝ անհրաժեշտ է ներդնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման արդիական, փորձարկված և լավագույն մեթոդներն ու ձևերը, մասնավորապես՝

ա. սահմանել պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց (գործադիրի, տնօրենների, կառավարիչների, պետության լիազոր ներկայացուցիչների) աշխատանքի պատասխանատվություն սահմանող և խրախուսման ենթարկող այնպիսի ձևեր ու մեխանիզմներ, որոնք կախված կլինեն նրանց գործունեության վերջնական արդյունքներից.

8) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է, մասնավորապես՝

ա. բարեփոխել պետական մասնակցությամբ կազմակերպությունների հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակը գնահատող ցուցանիշների համակարգը՝ այն դարձնելով չափելի և համեմատելի,

բ. իրականացնել կազմակերպությունների կողմից հիմնական միջոցների օգտագործման վիճակի պարբերական ուսումնասիրություններ, առանձնացնել չօգտագործվող միջոցները և հանձնել լիազոր մարմնի տնօրինությանը.

9) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռներում հաշվառվող, կազմակերպությունների բնականոն գործունեության համար ոչ անհրաժեշտ գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով առանձնացնել կազմակերպությունների կազմից և հանձնել լիազոր մարմնի տնօրինությանը, ինչի արդյունքում՝ առևտրային կազմակերպությունների ակտիվների նվազումը կհանգեցնի դրանց ըստ ակտիվների շահութաբերության մակարդակի բարձրացմանը և պետությանը հանձնված գույքը կտնօրինվի ավելի արդյունավետ և նպատակային՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը կազմակերպել վերադաս պետական կառավարման համակարգի մարմնի կողմից փորձաքննություն անցած և հաստատված հեռանկարային զարգացման ծրագրի հիման վրա, մասնավորապես՝

ա. կազմակերպություններում քննարկել և հաստատել սահմանված օրինակելի ձևին համապատասխան ոչ թե ձևական, այլ իրատեսական գործարար ծրագրեր.

10) 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ներդնել գործունեության արդյունավետության որոշման և տնօրենների աշխատանքը գնահատող գործուն համակարգ՝ արդյունավետության որոշման և աշխատանքի գնահատման հիմնական չափանիշ սահմանելով ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշը: Ընդ որում, շահութաբերության ցուցանիշի գնահատման համար անհրաժեշտ է սահմանել բոլոր կազմակերպությունների համար շահութաբերության ցուցանիշի նվազագույն սահմանային շեմ և ըստ ոլորտների նաև ճյուղային շահութաբերության նվազագույն շեմ: Շահութաբերության նվազագույն սահմանային շեմն առաջարկվում է ընդունել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման վերջին երեք տարիների միջին դրույքաչափը: Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնտեսական

գործունեությունը խթանելու և շահութաբերության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է բարելավել գործող համակարգը.

11) օտարել.

ա. մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և այն անշարժ գույքի, որի՝ պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց, որի կազմը սահմանվում է՝ համաձայն N 4 ցանկի,

բ. սույն ծրագրի շրջանակներում օտարման ենթակա օբյեկտների շարքին դասվում են նաև մեկ մլրդ դրամից ավել գնահատված արժեքով ներդրումային հավանական հետաքրքրություն ներկայացնող, նախկինում վաճառքի դրված և չվաճառված անշարժ գույքը,

գ. սույն ծրագրի գործողության ժամանակահատվածում կոմիտեի կողմից անցկացված գույքի օգտագործման վիճակի ուսումնասիրության արդյունքում անշարժ գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ ներկայացված առաջարկությունների հիման վրա կարող է օտարման առաջարկվել N 4 ցանկում չներառված այլ գույք,

դ. պետական գույքի օտարման և պետական գույքի վարձակալության տրամադրման նպատակով բարեփոխել աճուրդների կազմակերպման համակարգը, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդի եղանակով կազմակերպել նաև շարժական գույքի վաճառքը և վարձակալության տրամադրումը: Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման համակարգը հնարավորություն կտա հանրությանն առցանց եղանակով դիմել և մասնակցել հայտարարվող աճուրդներին և հետևել դրանց ընթացքին:

12. Պետական գույքի վարձակալությունից ծրագրավորված մուտքերի ապահովումը ներկայացված է՝ համաձայն N 5 ցանկի:

13. Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարների սպասվելիք մուտքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է՝ համաձայն N 6 ցանկի:

14. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին (այդ թվում նաև փախստականների կարգավիճակ ունեցող) նվիրատվությամբ և սեփականաշնորհմամբ տրամադրել պետական մարմիններին ամրացված 100 և ավելի բնակելի տարածքներ:

15. Իրականացնել հսկողություն N 7 ցանկում ընդգրկված՝ մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրատուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով ստանձնած պարտավորությունների նկատմամբ:

16. Ապահովել N 8 ցանկում ընդգրկված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ծրագրավորված տնտեսական ցուցանիշների կատարումը, մասնավորապես, ապահովել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում շահույթի ծավալի շարունակական ավելացում:

17. Պետական գույքի կառավարման ոլորտում հիմնախնդիրներից են պետական գույքի կառավարման օրենսդրության արմատական բարեփոխումները, մասնավորապես, մեկ միասնական օրենսդրական ակտի՝ օրենքի ընդունման միջոցով պետական գույքային հարաբերությունների կարգավորումը, մասնավորապես, «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» և «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կարգավորումների հիման վրա մեկ նոր օրենքի՝ «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

**V. ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

18. Պետական և տարածքային կառավարման մարմիններն իրավունք չունեն սույն ծրագիրն ուժի մեջ մտնելուց հետո «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի համաձայն մասնավորեցման ենթակա

պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական այլ գույքի նկատմամբ իրականացնելու այնպիսի գործառույթներ, որոնց արդյունքում անհնար կդառնա պետական գույքի նկատմամբ սույն ծրագրով սահմանված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, պետական և տարածքային կառավարման մարմինները պարտավոր են սույն ծրագրում ընդգրկված ընկերություններին թույլ չտալ իրականացնել ոչ համարժեք կամ զեղչ գներով խոշոր գործարքներ, ընկերության գործունեության հետ չկապված ծախսեր (գործարքներ), մասնավորապես, բաժնետիրոջ լիազորություններ իրականացնող պետական կառավարման համակարգի մարմնի աշխատողների գործուղման, բարեգործական, ընկերության հիմնական գործունեությանը չառնչվող՝ սոցիալական ուղղվածություն ունեցող և այլ անհատույց գործարքներ:

19. Ծրագրում ընդգրկված պետական գույքի նկատմամբ այլ սահմանափակումներ կարող են սահմանվել սույն ծրագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով:

**VI. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

20. 50 տոկոս և ավելի պետական սեփականությամբ բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գործունեությանն առնչվող՝ սույն ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը ապահովում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինները:

21. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման և միջոցառումների իրականացման աստիճանը որոշելու նպատակով ծրագրի կատարման մասին մշակվում է տարեկան հաշվետվություն, որը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացվում մինչև հաջորդող տարվա մայիսի 1-ը:

## Ց Ա Ն Կ N 1

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐՈՎ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Առևտրային կազմակերպության անվանումը	Լիազոր մարմնի անվանումը	Լուծարման վերաբերյալ առաջարկության հիմնավորումը
1.	«Կանթեղ շաքաթաթերթ» ՓԲԸ	ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ	Կազմակերպությունը գործունեություն չի իրականացնում, չունի գրանցված աշխատակիցներ:

## Ց Ա Ն Կ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎՈՂ՝ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՄ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՆՇԱՐԺ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Անվանումը	Լիազոր մարմնի անվանումը	Հիմնավորում
1.	Կաթնախոհանոց	Կոտայքի մարզպետի աշխատակազմ  «Արուլյանի ծննդատուն»	Տվյալ շենքը տարիների ընթացքում չի շահագործվել գործառույթների նվազման պատճառով և գտնվում է կիսախարխուլ վիճակում: Նախատեսվում է համաձայնության դեպքում շենքը տրամադրել վարձակալության՝ ակնկալելով բարեկարգում և ֆինանսական հավելյալ մուտքեր:
2.	«Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցի հին մասնաշենք	Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ	Կառավարության 02.11.2006 թ.-ի N 1911-Ն որոշում
3.	«Գավառի ԲԿ» ՓԲԸ հին ինֆեկցիոն մասնաշենք	Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ	Շենքը գտնվում է քայքայված վիճակում, օգտագործման համար պիտանի չէ և հիմնական մասնաշենքից գտնվում է 3 կմ հեռավորության վրա:



## Ց Ա Ն Կ N 3

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՉՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ (ՉԼՈՒԾԱՐՎԱԾ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

NN ը/կ	Մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերության (օբյեկտի) անվանումը	Ծածկագիրը՝ ըստ մասնավորեցման ծրագրի	Լիազորմարմնի անվանումը	Առաջարկության բովանդակությունը (մասնավորեցնել կամ լուծարել)	Առաջարկվող ժամկետը (տարի)
1.	«Հրազդանի մարզահամալիր» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90051	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.
2.	«Զիասպորտի կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90057	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.
3.	«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը (80 % պետական բաժնեմաս)	21876	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.
4.	«Երևանի ջրամատակարարման ուղեմաս» ԲԲԸ (100 % պետական բաժնեմաս)	60347	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.
5.	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90108	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.
6.	«Հանրապետական անձավարուժական կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90115	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.
7.	«Հատուկ լեռնափրկարար ծառայություն» ՓԲԸ (100 % պետական բաժնեմաս)	90124	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.

8.	«Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՓԲԸ (100 % պետական բաժնետնաս)	90121	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2023-2024 թթ.
9.	«Արմենիկում» ՓԲԸ (100 % պետական բաժնետնաս)	90125	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.
10.	«Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ (100 % պետական բաժնետնաս)	90126	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցում /լուծարում	2024-2026 թթ.
11.	Գորիսի «Բերրիություն» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետնասը (34 % պետական բաժնետնաս)	61129	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցման կամ լուծարման առաջարկություն	2024-2026 թթ.
12.	«Մուկ և Սաթինե» ՍՊԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետնասը (24 % պետական բաժնետնաս)	90104	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցման կամ լուծարման առաջարկություն	2024-2026 թթ.
13.	«Իջևանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետնասը (34 % պետական բաժնետնաս)	62308	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցման կամ լուծարման առաջարկություն	2024-2026 թթ.
14.	«Ախուրյանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետնասը (34 % պետական բաժնետնաս)	61110	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցման կամ լուծարման առաջարկություն	2024-2026 թթ.
15.	«Անիի «Ագրոսպասարկում» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետնասը (34 % պետական բաժնետնաս)	61100	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցման կամ լուծարման առաջարկություն	2024-2026 թթ.
16.	«Վարդենիսի «Բերրիություն» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետնասը (34 % պետական բաժնետնաս)	61138	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցման կամ լուծարման առաջարկություն	2024-2026 թթ.
17.	«Դվին կոնցետն» ՓԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետնասը (38.4 % պետական բաժնետնաս)	21843	ՀՀ ՏԿԵՆ ՊԳԿԿ	Մասնավորեցման կամ լուծարման առաջարկություն	2024-2026 թթ.

## Ց Ա Ն Կ N 4

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ, ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՈՐԻ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՓՈԽԱՆՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN ը/կ	Գույքի անվանումը	Գույքի հասցեն	Շենք- շինություն- ների մակերեսը (քառ. մ)	Հողամասի մակերեսը (քառ. մ)	Լիազոր մարմնի անվանումը	Սեփականության վկայական	Կադաստրային ծածկագիր
1.	Տարածք	ք. Երևան, Նոր Նորք, Մոլդովական փող., 29/5 շենք, 1/8	50.1	4925.1 ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	18042014-01-0219	01-008-0003-0236
2.	Տարածք	ք. Երևան, Նոր Նորք, Մոլդովական փող., 29/5 շենք, 1/9	67.9	4925.1 ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	20052014-01-0042	01-008-0003-0236
3.	Կենցաղի տուն 3 անվանում անշարժ գույքի	ՀՀ Արագածոտնի մարզ, քաղաք Ապարան, Մ. Բաղրամյան փողոց 14	555.52	1680 ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	07022020-02-0006	02-002-0103-0001
4.	Ավտոտնակներ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Սևան, Նաիրյան փողոց 169/18	59.81	86.6	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	16122021-05-0046	05-004-0003-0079
5.	Դպրոցի չհասագործվող շենք	ՀՀ Արագածոտնի մարզ, համայնք Վարդենիս, 10-րդ փողոց 14	2 695,21	16 409	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	16062017-02-0016	02-101-0044-0002

6.	Բենզինի պահեստ	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին կայարան	21.3	80	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	2283410	06-002-0653-0002
7.	Ավտոստանակներ	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Հատիսի փ., թիվ 6/5	280.8	474.36	ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ	26052023-07-0167	07-002-0116-0187
8.	Ջորամասի տարածք	ք. Երևան, Արշակունյաց պողոտա 4/1	15 122.83	64 900.64	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	14092022-01-0317	01-006-0307-0062
9.	Շենքի 9-րդ հարկից 2 սենյակ	ք. Երևան, Կիևյան 16 շենք 9/2	237.9 (որից 169.9 ընդհանուր համատեղ սեփական.)	բաժնային	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	03082022-01-0079	01-003-0123-0002-001
10.	Դպրոցի շենք-շինություններ	ՀՀ Արմավիրի մարզ, Այգեկ համայնք 1-ին փողոց 1/2	725.7	9845	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	30092021-04-0054	04-009-0010-0003
11.	Հողամաս	ք. Երևան, Հրազդանի կիրճ, խճ. 2/3		416.32	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	12032018-01-0216	01-006-0531-0008
12.	Շենք-շինություններ	ք. Երևան, Հրազդանի կիրճ, խճ. 2/4	747.8	4177.2	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	04062020-01-0094	01-006-0531-0002
13.	Շենք-շինություններ	ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գյուղ Նոր Գյուղ 1-ին փողոց 7	11 604.04	29 271	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	30032023-07-0089	07-049-0030-0014

14.	Հողամասեր	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Իսակովի պողոտա 17/2		16985.49	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	14092022-01-0389	01-007-0537-0152
15.	Հողամաս	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Իսակովի պողոտա 17/5		48600	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	14092022-01-0348	01-007-0545-0002
16.	Հողամաս	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Իսակովի պողոտա 17/7		9240	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	15092022-01-0026	01-007-0545-0007
17.	Հողամաս	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Իսակովի պողոտա 17/178		12756	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	12102022-01-0299	01-007-0537-0040
18.	Շինություններ	ք. Երևան, Ավանեսովի 3/8	1539. 52	527. 6 սեփականություն, 2806 ընդհանուր համասեղ	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	20092023-01-0017	01-005-0637-0382, 01-005-0637-0192
19.	Շինություններ	համայնք Արմավիր գյուղ Արաքս թիվ 1 պահեստ	1488. 6	9637.1	ՀՀ ներքին գործերի նախարարություն	12102023-04-0077	04-016-0123-0040
20.	Արխիվի տարածք	ք. Երևան, Արաբկիր, Բաղրամյան պողոտա 59/4	3 374,8	3 160.7	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	20062014-01-0231	01-003-0136-0095
21.	Հրշեջ կայան	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ջիվանու փ., թիվ 64	1 330.78	930.66	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	08092020-08-0030	08-001-0744-0007

22.	Կաթսայատուն, ավտոտնակ	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ջիվանու փ., թիվ 64/1	125.11	150.82	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	17092020-08-0040	08-001-0744-0033
23.	Հանրակացարան	ք. Երևան, Արաբկիր համայնք, Արաբկիր 37 փ. թիվ 1/1	2630.2	812.76	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	15082022-01-0207	01-003-0237-0093
24.	Վարչական շենք	ՀՀ Արմավիրի մարզ, Զարթոնք համայնք, 4-րդ փողոց թիվ 57	753.74	3028	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	04092018-04-0030	04-042-0135-0003
25.	Ամբուլատորիայի շենք	ՀՀ Արագածոտնի մարզ, համայնք Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց թիվ 16/2	311.23	391	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	19092018-02-0031	02-053-0014-0029
26.	Ստորգետնյա ավտոկանգառ	ք. Երևան, Արաբկիր, Վ. Վաղարշյան փողոց 24/22	2715.7	1509.8 բաժնային	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	23022022-01-0180	01-003-0103-0228
27.	Դպրոցի հին շենք	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 197	2153,12	764.0, 345.0	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	26112015-06-0027	06-002-0038-0182, 06-002-0038-0453
28.	Վարչական շենքի 4-րդ հարկ	ք. Երևան, Վարդանանց 8 թիվ 4 տարածք	122.29	ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	11072023-01-0334	01-006-0136-0005
29.	Վարչական շենքի 4-րդ հարկ	ք. Երևան, Վարդանանց 8 թիվ 6 տարածք	580.7	ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	11102022-01-0083	01-006-0136-0005

30.	Տարածք	ք. Երևան, Նաիրի Զարյան 22, 11 տարածք	537.3	ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	07082023-01-0053	01-003-0227-0002- 001-011
31.	Հասարակական տարածք	ք. Երևան, Նաիրի Զարյան 22, 14 տարածք	72	ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	04082023-01-0202	01-003-0227-0002- 001-026
32.	Շենք- շինություններ	ք. Երևան, Մուրացյանի փողոց 110/1	1687.5	1189.7 սեփականու- թյուն, 0.01092 ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	16062023-01-0154	01-005-0253-0056, 01-005-0253-0105
33.	Շինություն	ք. Երևան, Նոր Նորք, Հ. Գյուրջյան փողոց 58 շենք, 98	1182.5	3 495	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	19122022-01-0213	01-008-0101-0409- 001-098
34.	Ոստիկանության նախկին տարածք	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան ք. Զրառատ թաղամաս 550 հիվանդանոց	5242. 84	70000	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	07042020-07-0003	07-001-0183-0001
35.	Շենք- շինություններ	ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գյուղ Քասախ, Ռ. Սաֆարյան փողոց 10	2200.3	11 090	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	17072023-07-0175	07-065-0036-0001
36.	Մասն, պարիսպներ	ՀՀ Շիրակի մարզ, համայնք Աշոցք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց 1/3	106.71	655.85	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	14122022-08-0052	08-015-0020-0084
37.	Շենք	ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի թաղամաս 4	281.9	2115	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	2374650	06-008-0073-0020

38.	Շենք- շինություններ	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Պետրոս Դուրյան փողոց	668.17	1755	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	28092013-07-0042	07-001-0636-0009
39.	Հողամաս	ՀՀ Արմավիրի մարզ, Մայիսյան համայնք	-	48 700	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	17102019-04-0077	04-043-0961-0001
40.	Ոչ բնակելի տարածք	ք. Երևան, Ե. Քոչարի 5 շ., 69 շինություն	115.1	663.14 ընդ. բաժնային սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	26092019-01-0248	01-006-0219-0227- 001-070
41.	Վարչական շենք	ք. Երևան, Վարդանանց փողոց թիվ 13 ա	1005,7	122. 45 և 183. 41 բաժնային	ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտե	2692034	01-006-0136-0121-001- 001
42.	Վարչական շենք	ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա 49/4	8 403.25	2 582.5	ՀՀ առողջապա- հության նախարարություն	494478	01-003-0214-0209
43.	Վարչական շենք	ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա 49/4 շենք, 9 շինություն	2 077.4	1 543 բաժնային	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	08062020-01-0155	01-003-0214-0140
44.	Առողջարա- րական կենտրոն	ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 4	2 318,4	24644.7	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	31052023-11-0021	31052023-11-0021
45.	Հիվանդանոցի շենք	ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Ա. Խաչատրյան փողոց 116/1	4 945.11	6 858	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	19092023-03-0017	03-001-0039-0062
46.	Շինություններ	ՀՀ Սյունիքի մարզ, հ. Մեղրի, գ. Լեհվազ, 6-րդ փողոց, 15/1	373.18	2 130	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	08-001-0744-0033	09-037-0134-0002



47.	Ավերակ	ՀՀ Արագածոտնի մարզ, Վարդենուտ համայնք, 1 փողոց, 31/2	354.44	354.44	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	30012014-02-0007	02-102-0035-0047
48.	Երկաթուղու արտադր. համալիր	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, Օղակաձև փողոց թիվ 4/2	832,15	2 894,4	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	21022023-07-0104	07-003-0013-0135
49.	Աշտարակի նախկին բժշկական կենտրոնի հիմնական մասնաշենք	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Նարեկացու փողոց	1793.3	975	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	2717949	02-001-0221-0062
50.	Գրասենյակ	ք. Երևան, Մյասնիկյան 43 ա	190	2 245,58	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	17042023-01-0254	01-006-0051-0085
51.	Վարչական շենք	ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա 49/3	15 102.5	6 187.58	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	17012022-01-0174	01-003-0214-0247
52.	Վարչական շենք	ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա 49/2	862.7	925.4	Մանդամթերքի անվտանգության տեսչական մարմին	20122016-01-0196	01-003-0214-0173
53.	Վարչական շենք	ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա 49/2 շենք, 1	518.4	925.4	Մանդամթերքի անվտանգության տեսչական մարմին	08062020-01-0235	01-003-0214-0173-001- 003

54.	Վարչական շենք	ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա 49/4 շենք, 1	123.6	925.4	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	23012018-01-0122	01-003-0214-0173
55.	Վարչական շենք	ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա 49/5	2412.6	943.9	ՀՀ առողջապահության նախարարություն	03082021-01-0139	01-003-0214-0210
56.	Նախկին դպրոց	ՀՀ Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք. Թևոսյան փողոց 7	3 059.82	4 938.2	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	19062023-06-0071	06-001-0211-0051
57.	Հրշեջ ծառայության շենք/ԱԻՆ	ՀՀ համայնք Աշոցք գյուղ Աշոցք	367.83	2200	ՀՀ ներքին գործերի նախարարություն	2039083	08-015-0016-0027
58.	Վարչական շենք/ՊԳԿԿ	համայնք Աշոցք գյուղ Աշոցք 1-ին փողոց 1-ին փակուղի 1 վարչական շենք	537.76	2404.9	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	04032020-08-0044	08-015-0039-0004
59.	Անասնաբուժարան/ՊԳԿԿ	համայնք Ամասիա Ամասիա գյուղ 8-րդ փողոց թիվ 5	445.78	5700	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	963666	08-010-0052-0002
60.	Հարկայինի նախկին վարչական շենք/ՊԳԿԿ	համայնք Ախուրյան գյուղ Ախուրյան	743.11	618	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	1396474	08-007-0002-0033
61.	Ոստումնական մասնաշենք/ՊԳԿԿ	Ախուրյան համայնք գյուղ Ախուրյան, Չարենցի փողոց, 1	515.76	832	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	29022012-08-0032	08-007-0049-0055
62.	Ավտոտնակներ/ՊԳԿԿ	Ախուրյան համայնք գյուղ Ախուրյան, Չարենցի փողոց, 20/5	682.95	935	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	29022012-08-0033	08-007-0049-0054

63.	Վարչական շենք/ՎԻՃ. ՎԱՐՉ	Անի համայնք քաղաք Մարալիկ Շահինյան 10	527.14	535.3	Վիճակագրական կոմիտե	06112023-08-0023	08-003-0029-0089
64.	Կիսաքանդ հանրակացարան /ՊԳԿԿ	համայնք Մարալիկ ք. Գագարինի փողոց, թիվ 2	4396.25	3562	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	2596198	08-003-0083-0017
65.	Բանկի շենք/ՊԳԿԿ	Անի համայնք քաղաք Մարալիկ Շահինյան 3	871.99	1340	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	03112023-08-0042	08-003-0026-0063
66.	Պոլիկլինիկա	Արթիկ համայնք քաղաք Արթիկ Տուֆագործների 3	283.1	785.9	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Հաշվառված է	Գրանցված չէ
67.	Քրեակատարողական հիմնարկ/ՊԳԿԿ	Գյումրի քաղաք Աճեմյան 62	2682.60	16840	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	22102018-08-0029	08-001-0764-0151
68.	Հիվանդանոց/ՊԳԿԿ	Գյումրի քաղաք Սարգսյան 25/9	1968.67	4527	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	24012023-08-0047	08-001-0317-0023
69.	Վարչական շենք/ՎԻՃՎԱՐՉ	Գյումրի քաղաք Բուլվարային 5	2104.1	6760	Վիճակագրական կոմիտե	051399	08-001-0167-0005
70.	Շենք/ՊԳԿԿ	Գյումրի քաղաք Ս. Մեծի 25	527.74	1008.58	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	15112021-08-0031	08-001-1313-0049
71.	Հիվանդանոց/ՊԳԿԿ	Վանաձոր քաղաք Նիզամու 53/1	3347.26	3209.4	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի	13082021-06-0052	06-001-0511-0088

					կառավարման կոմիտե		
72.	Մասնաշենք/ՊԳԿԿ	Վանաձոր քաղաք Նիզամու 53/4	540.12	876.5	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	13082021-06-0042	06-001-0511-0087
73.	Ենթակայան/ՊԳԿԿ	Վանաձոր քաղաք Բանակի փողոց 8-4	27.0	392.7	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	13082021-06-0043	06-001-0455-0182
74.	Մասնաշենք/ՊԳԿԿ	Վանաձոր քաղաք Բանակի փողոց 8-6	1841.08	12399	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	13082021-06-0044	06-001-0455-0179
75.	Մասնաշենք/ՊԳԿԿ	Վանաձոր քաղաք Բանակի փողոց 8-1/2	2153.88	3300	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	28112022-06-0002	06-001-0455-0172
